մենաստանի եկեղեցին, որ կ'ինկնար Աստապատու և Կարմիր վանաց մէջտեղ։ Աստապատու այս երկրորդ մենաստանն կը կոչուէր Ս. Յովհաննէս, *որոյ այժմ միայն տխուր աւերակներն կը տեսնուին։*

Կարմիր վանքի առաջնորդ Նիկողայոս վարդապետը 1831ին նորոգել տուաւ եկեղեցւոյն որմոց հիմերը, որք ուրիշ շէնքերու հետ բուական փտտուեցան 1840ին երկրաշարժէն։ Այժմ տակաւին շէն է վանքս, և է ընդ տեսչութեամբ Նախճաւանու հոգևոր կառավարութեան։ — Ռուսաց աշխարհահամարի մէջ նշանակուած է Կարմիր վանք *անուամբ հայաբնակ գիւղ մը, որ թուի թէ կը գտնուի վանացս մօտ. ունի 17 տուն՝ իբր 80 բնակչօք։ — Աբրահամ կաթողիկոսը 1736ին այցելելով Աստապատ, կ'ողբայ ու կը հառաչէ տեսնելով տեղւոյն դրից վայելչութիւնն և ամայանալն. նոյն ժամանակ. կիրակի օր մը պատարագի սուրբ խորհուրդն կատարելով, կը ձեռնադրէ երեք եպիսկոպոսներ։ Որչափ և տխուր է Աստապատ՝ իւր ամայի շէնքերով, սակայն զուարթ են տակաւին իւր սահմանքն և զարդարուած են բազմաթիւ մրգաբեր ծառերով, յորս հռչակուած է խնձորն արքունական (պրսկ. սիպի սուլթանի), գեղձը, տանձն, ծիրանն, և այլն։ Կարմիր վանքի սահմանները, լերան կողերուն վրայ կը տեսնուին բրածոյ քարայրներ, որոնք համարուած են գանձուց և զրոց պահարաններ։ — Շահխաթունեանց, Ստորագր. Բ. 297–304։ Սիսական, 507–514։*

Հ. ՍՈՒՔԻԱՍ ԷՓՐԻԿԵԱՆ

ԲՈՒՐԱԿՆ. — Կը հրատարակէ քանասիրական, տեղագրական, ազգագրական յօդուածներ։ Խմբ. Ս. Գաբրիէլեան։ — Գինն է 12 ֆր.։

Հասցէ Direction du «*Puraghn*» Bahtché kapou kazasker han N. 16 CONSTANTINOPLE.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ[1]

ՅՕԴՈՒԱԾ Ա

Որպիսութիւն և Բնաշրջում եկեղեցական երգերու՝ առ հասարակ, և մասնաւորապէս Հայոց երգերու։ Գահիրէի Հայոց եպիսկոպոսական եկեղեցւոյն գլխաւոր դպրապետին երաժշտական գիտութիւնը և համառօտութիւն մեզի տուած տեղեկութեանցն իւր արուեստին վրայ։

ԸՍՏ *մեր անփոփոխ կարծեաց, եկեղեցական երգերն պէտք է առաւելապէս գրաւեն քննողաց ուշադրութիւնը. զի ազգայնութեան կնիքը կը ստանան և կը պահեն աշխարհիկ երգերէ աւելի, որովհետեւ ազատ են ի յարատեւ փոփոխութեանց, որոց գերի են միւսներն։ Հասարակաց ճաշակի փոփոխութեանց, նորութեան սիրոյն, և երբեմն նաեւ երգչաց քմահաճոյից համեմատ յարափոփոխ են արտաքին երգերը, և երբեմն օտար կերպարանք և օտար զարդեր կ'առնուն, մինչդեռ հոգեւորականք կը մնան անփոփոխ։ Անոնց հրապոյրն և պատճառած զուարճութիւնն կը ծառայեն մարդկանց մէջ բարեկամական յարաբերութիւններ հաստատելու. իսկ կրօնական լուրջ երգերն՝ զմարդ Աստուծոյ հետ միացնելու միջոց մի են, և հետեւաբար խորշում կը ներշնչեն իրեն յամենայնէ, որ կարող է խանգարել և նուաստացնել իւր բնութիւնը. աշխարհային ու-*

1. Ներկայ տարուան Բազմավէպի պրակով սկսանք Հայ երաժշտական խազերու վրայ ուսումնասիրութիւն մը հրատարակել, որուն յառաջորդ մասերն չհրատարակած, մեր ընթերցողաց կը ներկայացընենք նաեւ Եւրոպական հրատարակութեան մը մէջ (Description de L'Egypte. Tome quatorzième. Paris. էջ 324) եղած ուսումնասիրութեանս յարակից C. L. F. Panckoucke*ի* ուշադրաւ յօդուածին թարգմանութիւնը։

digitised by A.R.A.R.@